

ք. Երևան

6-ը օգոստոսի 2018թ. ժամը 17¹⁵

Մասնակցում էին՝ **գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԶԲՖԿ ծառայության պետ, ԲՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղայան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության նորմատիվ իրավական ապահովման բաժնի առաջատար մասնագետ ԲՀԾ 3-րդ դասի խորհրդական Ն. Արշակյան,

Քացակայում են՝

ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ԲՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Արսլանյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյանը:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման ղեկարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ԲՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Մ. Հոխեյան:

Քանի որ հանձնաժողովի նախագահը, գնահատման աշխարհակազմի պատասխանատուն՝ ՀՀ ՊՆ աշխարհակազմի ղեկավարի տեղակալ, ԲՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Արսլանյանը քացակայում էր /գտնվում է արձակուրդում/ նիստից, հանձնաժողովի նախագահի գործառույթները իրականացնում էր՝ 17.03.2018թ, թիվ 144/ԴՎԱ հրամանով հանձնաժողովի հաջորդ անդամը ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԶԲՖԿ ծառայության պետ, ԲՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյանը:

Ընդունել է զիջություն, որ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի 04.08.2018թ. N 426/ԴՎԱ հրամանով հանձնաժողովի կազմում տեղի է ունեցել փոփոխություն և ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյանի /գտնվում է արձակուրդում/ փոխարեն որպես հանձնաժողովի գնահատող անդամ է սահմանվել ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության նորմատիվ իրավական ապահովման բաժնի առաջատար մասնագետ ԲՀԾ 3-րդ դասի խորհրդական Ն. Արշակյանը, որը ներգրավվել է հանձնաժողովի աշխատանքներին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Հոխեյան)

1. Մասնակցի կողմից համատեղ գործունեության պայմանագրով հանդես գալու դեպքում գնային առաջարկը ԱԱՀ-ով կամ առանց ԱԱՀ ներկայացված լինելու պարագայում լիազոր մարմնի կողմից ստացված պարզաբանման քննարկման մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակցի կողմից համատեղ գործունեության պայմանագրով հանդես գալու դեպքում գնային առաջարկը ԱԱՀ-ով կամ առանց ԱԱՀ ներկայացված լինելու պարագայում լիազոր մարմնի կողմից ստացված պարզաբանման քննարկման մասին.

(Մ. Հոխեյան)

Քննարկելով մասնակցի կողմից համատեղ գործունեության պայմանագրով հանդես գալու դեպքում գնային առաջարկը ԱԱՀ-ով կամ առանց ԱԱՀ ներկայացված լինելու պարագայում լիազոր մարմնի կողմից ստացված պարզաբանումը, որում նշված էր որ համարել գործունեության պայմանագրի կողմերը համարվում են ԱԱՀ վճարողներ, հեղուկաբար վերցնելներին կողմից ներկայացված գնային առաջարկն իր մեջ պետք է ներառի ԱԱՀ եթե օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ գործարքն ազատված չէ ԱԱՀ-ից կամ 65-րդ հոդվածի համաձայն չի համարվում ԱԱՀ-ի գողական ըրույթաչափով հարկվող գործարք /պարզաբանումը կցվում է/, գնահատող հանձնաժողովը որոշեց՝ չեղյալ համարել 09.04.2018թ. թիվ 3 արձանագրության 4.1 կետով «Դառես» ՍՊԸ-ի /«Երվադա» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեությանը/ առաջին տեղ ճանաչված լինելու որոշումը /2-րդ չափաբաժնի մասով/ և 02.05.2018թ. թիվ 4 արձանագրության 1.2 կետով «Դառես» ՍՊԸ-ին /«Երվադա» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեությանը/ հարթող ճանաչելու որոշումը /2-րդ չափաբաժնի մասով/, ինչպես նաև չեղյալ համարել 28.06.2018թ. թիվ 5 արձանագրության 1.3 կետով «Դառես» ՍՊԸ-ի /«Երվադա» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեությանը /առաջին տեղ ճանաչված լինելու որոշումը /1-ին չափաբաժնի մասով/ և 12.07.2018թ. թիվ 6 արձանագրության 1.2 կետով «Դառես» ՍՊԸ-ին /«Երվադա» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեությանը/ հարթող ճանաչելու որոշումը /1-ին չափաբաժնի մասով/: Գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Դառես» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով ընթացակարգին մասնակցել է «Երվադա» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեությանը պայմանագրով որոշեց մերժել «Դառես» ՍՊԸ-ի հայտը /հիմք ընդունելով լիազոր մարմնի կողմից ստացված պարզաբանումը/, քանի որ «Դառես» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցել էր համատեղ գործունեության պայմանագրով «Երվադա» ՍՊԸ-ի հետ և գնային առաջարկը ներկայացրել է առանց ԱԱՀ-ի:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող

Ա. Պապյան

Գնահատող


Լ. Բադալյան

Գնահատող

Ն. Արշակյան

Գնումները համակարգող՝

Մ. Հոխեյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆԱԿՈՒՄԻ

Երևան, 2018 թ. 07-07

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

03/27 1/13539-18

2018-07-27

« ՀԱՍՏՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԽԱՐԱՊՈՒԹՅՈՒՆ »

Ի պատասխան 16.07.2018թ
թիվ ՊՎԱ/2567 գրության

Ուսումնասիրելով վերոնշյալ գրությանը բարձրացված հարցը՝ հայտնում ենք հետևյալ
երես ընկերությունները գնման ընթացակարգին մասնակցում են որպես ՀՀ քաղաքա-
պետական օրենսգրքին՝ Համապատասխան կնքված համատեղ գործունեության պայմանագրի
2-րդ և 3-րդ ապա ՀՀ հարկային օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) համատեղ
գործունեության պայմանագրի շրջանակներում հարկային հարաբերությունների
կարգավորման առանձնահատուկ դրույթներ են սահմանված: Մասնավորապես Օրենսգրքի
254-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ համատեղ գործունեության
պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և
նոտարները չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարողներ:

Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ եթե նույն
հոդվածի 2-րդ, 2.1-ին և 3-րդ մասերով այլ բան սահմանված չէ, ապա ԱԱՀ վճարողներ են
համարվում նույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին համապատասխան հարկային մարմնում
որպես ԱԱՀ վճարող հաշվառված կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և
նոտարները հետևյալ դեպքերում՝

1) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը,
եթե հարկ վճարողը տվյալ հարկային տարվա հունվարի 1-ի դրությամբ, Օրենսգրքի 13-րդ
բաժնի համաձայն, չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող կամ Օրենսգրքի 13-
րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի

հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

2) հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառված) կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նոտար նշանակված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը համապատասխանաբար պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվա դրությամբ, Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող կամ Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ համատեղ գործունեության պայմանագրի կողմերը համարվում են ԱԱՀ վճարողներ, հետևաբար վերջիններիս կողմից ներկայացված գնային առաջարկն իր մեջ պետք է ներառի ԱԱՀ, եթե Օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ գործարքն ազատված չէ ԱԱՀ-ից կամ 65-րդ հոդվածի համաձայն՝ չի համարվում ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարք:

Միաժամանակ հայտնում ենք, որ մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:



ԿԱՐԵՆ ԹԱՄԱՐՅԱՆ

6847
28 07 13
2